ԳՈՐԾՈՒՂՈՒՄ ԲԵԼԳԻԱ

2014 թվականի հոկտեմբերի 6-8-ը Բելգիայի Լյուվեն քաղաքում կազմակերպվել էր ՏԵՄՊՈՒՍ «ԳՈՎԵՐՆ» ծրագրի հանդիպումն ու թրեյնինգը: Թրեյնինգի նպատակն էր համախմբել գործընկեր բուհերի ֆակուլտետային մակարդակի ադմինիստրացիայի ներկայացուցիչներին (դեկաններ, ամբիոնի վարիչներ), ինչպես նաև Կրթության և գիտության նախարարության, Որակի ապահովման ազգային կազմակերպության, ուսանողների ներկայացուցիչներին, քննարկելու այն մարտահրավերները, որոնք ծառացել են նրանց առջև մոդուլների, կրթական ծրագրերը կազմելու ընթացքում Բոլոնյան գործընթացի ներդրման ժամանակ, ինչպես նաև ստանալու ունակություններ՝ առավել արդյունավետ իրականացնելու այդ գործընթացները ոչ միայն հայաստանյան բուհերի հետ, այլ նաև եվրոպական համալսարանների ներկայացուցիչների հետ փորձի փոխանակման արդյունքում:

Լյուվենի համալսարանն առաջնորդվում է «*Հավասար հնարավորություններ բոլորի համար*» կարգախոսով և ակտիվ համագործակցում արտասահմանյան մի շարք համալսարանների և հետազոտական կենտրոնների հետ: Ավելի քան 40 մասնակից ներկայացնում էին հայաստանյան տարբեր բուհեր:

Մեր համալսարանը, որը միակ մասնավոր բուհն էր նշվածների թվում, ներկայացնում էին արտաքին կապերի համակարգող Նունե Սրապյանը, իրավագիտության ամբիոնի վարիչ Անի Խեչոյանը և օտար լեզուների ամբիոնի դասախոս Անահիտ Ալավերդյանը:

Վերապատրաստման դասընթացը նպատակ էր հետապնդում մասնակիցներին ծանոթացնել մագիստրոսական առարկայական ծրագրեր կազմելու մեխանիզմին, որից հետո նրանք կվերափոխեին և կհամապատասխանեցնեին բոլոր առարկայական ծրագրերն իրենց բուհերում: Առարկայական ծրագրերը պետք է նպաստեն ուսանողակենտրոն ուսուցման իրականացմանը, պետք է խթանեն ուսանողների շարժունությունը: Մասնակիցներին նախապես հանձնարարական էր տրվել՝ անգլերենով ներկայացնել որևէ առարկայական ծրագիր, որը պետք է օգտագործվեր ընթացիկ քննարկումների ժամանակ:

Որպես օրինակ մեր պատվիրակները ներկայացրել էին Օտար լեզուների ֆակուլտետի *բանասիրություն* որակավորման համար նախատեսված «*Հիմնական օտար լեզու»* առարկայի ծրագիրը: Քննարկումների ժամանակ բացահայտվեցին ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ, ինչպես որ ակնկալվում էր: Ներկայացված առարկայական ծրագրերը քննարկելուց հետո եվրոպացիները ներկայացրեցին իրենց կողմից արդեն իսկ մշակված նմուշ-օրինակը, և տրվեց հանձնարարական՝ վերափոխել և հնարավորինս համապատասխանեցնել բոլոր առարկայական ծրագրերը: